

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՌՃՅԱՆ

Անուններ կան, ժողովրդի համար հարացատ ու ընտանի անուններ, որոնք մահվածք մոռացության արվելու փոխարեն, ավելի էնչերմանում Մեր ժողովուրդն ունի իր անունները, որոնց հանդեպ տածում է անսահման սեր ու երախտագիտություն։ Նրանց շարքում բացարձակ վստահությունն ու իրավունքն ունինք՝ ավելացնելու Դերենիկ Դեմիրճյանի պատվոր անունը։

Մահացավ նա, և մեր երախտապարագ ժողովուրդը տվեց նրան իր վշտագին հրաժեշտը հուզումով և արտասուրով։ Ժողովրդի արցունքը ճիշտ զնահատելու համար, պետք է արժեսորել զիտենանք առիթը, որով պարմանավորված է նա։ Այժմ այդ առիթը Դեմիրճյանն է իր արտօւմ մահով։

Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թվականին Նիսալբալարում։ Նախնական կրթությունը տեղի ծխական դպրոցում ստանալուց հետո, 1892 թվականին ընդունվում է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Ուսանողական տարիներին իսկ «Տարազ» և «Մուշճա ամսագրերում տպագրվում էն նրա առաջին բանաստեղծությունները։ Ճեմարանի լրիվ դասընթացը շավարած, ուսումը շարունակում է թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտում է 1897 թվականին։ Գժվարին պայմանների մեջ է անցկացնում իր կյանքը։ Նրա երգերի առաջին ժողովածուն լույս է տեսնում 1899 թվականին։ 1905 թվականին մէկնում է Ելեցյարիա, սովորում է ժրնեկ համալսարանում։ 1910 թվականին վերադառնում է Թիֆլիս և զբաղվում ուսուցչությամբ։ 1920 թվականին փոխադրվում է Երևան, որտեղ ապրում է իր ստեղծագործական կյանքը մինչև խորին ծիրություն և մահ։

Դերենիկ Դեմիրճյանը մեր գրականության մեծ մշակն է։ Նա վազուց նա բերել է իր բրախինքն ու վաստակը, և իր առանձնահատուկ թարմությամբ ու բույրով կենդանացրեն է իր ածուկ հայ գրականության ընդարձակ անդաստանի մեջ։

Նա իր անդանիկ խոսքն ասել է շափածո երգով։ Նա բանաստեղծ էր զբուրազգաց երախտասարդի սրտով ու ավյունով, և որպես այդ-

պիսին նա ունեցել է իր արտօւմ մտարումները իր մատղաշ մատները սահեցրել է մարդկային զողովրիկ ապրումների և հովզերի ստեղնաշարի վրա։ Իրեն հատուկ վայելությամբ ու խոհականությամբ դաշնավորել է իր երգերը, որոնց մեջ կա կարեկցող ու զուրուուրուս սրտի թախիծ, կա տարտամ տիբություն, և կան մանավանդ խորհուղ մարի աներազ որոնումներ։ Նրա բանաստեղծությունները հուզում են առանձնապես այն ժամանակակի էր բանաստեղծի միաբնակ կանոնը և կանոնակի էր ապահովությունը ու հոգին պատավում են մարդու և կյանքի առանցքների շարք ու կազմում են իրենց ուրուց եղանակացությունը։

Ահա մի բանի առջ նրա երգերից։

Մի՛ լար, մի՛ թացիր աշերգ,
Աշքիդ լույսն ափսոս է, կանցնի,
Մի՛ տիբիր, վարդ զարուն հասակի,
Մի՛ օր է, վաս մայիս, կանցնի....

...և կյանքն էլ հեթիամ է էսպես,
Մի՛ շտապիր, մի՛ տանչվիր, կանցնի....

Գժվար է նրա երգերի մեջ ձաշել վշաի խորթյունը և ձեր, մանավանդ զժվար է նրան անուն տալը։ Հուսախարություն է զա, թի՛ սպարապես մարդասիրական հովզերի աղոտ թիւագրանք։ Ես կասեի և այս, և այն։

Հայ ժողովրդի ողբերգական անցյալը և այդ անցյալում հայ ժողովրդի ցուցարեած հերոսական պայքարն ու առկունությունը Դերենիկ Դեմիրճյանի խոսել են նրա ստեղծագործական կյանքի առաջին իսկ տարիներին։ «Ենկթիմուր» պոեմը այդ վկայությունն է բերում մեզ։ Այնտեղ կա մեր ժողովրդի զառնադես տառապանքը, հոշուումը, կսկիծը, կենկ-թիմուր կոշած վայրագ բըսնակալի Հայաստան կատարած արշավանքի պատճառով։

Ըսդգծելին այս պոեմի գաղափարական արժեքների մեջ բանաստեղծի ունեցած վրաստահությունն է իր ժողովրդի ուժի և վերջնական հաղթանակի նկատմամբ։

Թանի զիշերներ եկել են անցել
Մե բուերի պես Հայոց Աշխարհից...
Երթան ու չգան անցած զիշերներ,
Կանցնի այս մեկն էլ Հայոց
Աշխարհից....

Այս զիտակցությունը անհրաժեշտություն էր այս օրերին, երբ Հայ ժողովորդը ապրում էր իր հերթական մեկ ծանր ազնաք: Գառն էր ժամանակը և մարդիկ չար՝ Հայ ժողովորդի հանգիւթ: Հուսալորությունը բնութանուր էր, անկումից զուրու զարու հասանկարները մշաւշված էին:

Այս պահի արքասար չանի իր սեփական երանքները թիւ, բայց ոնի իր սվաճումները ըստ հանրապետության:

Դերենիկ Դեմքի հայանը շափածո խոսրով չէ որ պիտի ներկայանար մեր զրականության պատմության և մեր ժողովորդի գնահատանքին: Արձակագրաթյունը եզավ այս մասուցանը, որով նա բառ առ բառ, խոհերով ու հույզերով, արժեք առ արժեք մասուցվեց զրական աշխարհին, անցնելով ազգային աշնաններից շատ ավելի հեռու:

Նախան 1920 թվականը տպագրվեցին Դեմքի հայանի մի բանի պատմվածքները, որոնք որոշակի կերպով վկայեցին հեղինակի առաջանքը և նշեցին նրա հաջողության ուղիները. Այս պատմվածքները նյութ ունեն ժամանակակից Հայ կյանքի տարրեր հանդրվանները և այդ հանդրվանների մեջ անձ և անող մարդկանց ատարեն խմբերը: Այս կյանքի բնորոշ հակությունը խայտարգիւթունն է, միաժամանակ՝ մի քիչ գորշ և բավականաշափ ողբալի:...: «Ավելորդները ի ավելորդությունը, նրանց դառնադին ողբերգությունը, հարազատ ժողովորդի տառապալից առօրյան մի կողմից, մյուս կողմից ամեն գույնի գացցմունքների առուժախըլ բախվում են այդ պատմվածքների մեջ և գեղարիւսական պատկերավորում ստանալով ստեղծում են կյանքի կենդանի թատերաբեմ, որտեղ յուրաքանչյուրն ունի իր գերն ու տեղը: Պատմվածքներն ունեն հնեւելալ անոնները. «Ավելորդը», «Զութակ և սրինդ», «Սեփականությունը», «Ստարոբար», «Ժափիտք»:

Դերենիկ Դեմքի հայանը իր հարազատ ժողովորդի հետ միատեղ ունեցավ իր ստեղծագործական մունք կյանքի բեկման շրջանը, երբ Հայրենի հողի վրա ստեղծվեցին նոր կարգ ու ձև, նոր իրազրություններ ու պայմաններ: Գրով կողմնորոշվեց ճիշտ և արագ: Նոր մարդիկ նրա շուրջը վերակառուցում էին իրենց կյանքը, հոգերանությունը, կոփում էին իրենց իդաերն ու տրամադրությունները, որդեգրում էին նոր մտայնություն, կազմում էին իրենց ուրույն զիտակցությունը: Այս բո-

րոր ժիրավը զրայի հայացքի և սրտի տուաշ անսես լինել չեխն կարող: Գրով չեք կարող վերլուծության շենթարկել կյանքի և մարդկանց այդ արմատական հնդաշչումը: Եվ ահա լույս են տեսնում Դեմքի հայանի նոր պատմվածքները իրենց բազմաթիվ տառածնաշակություններով: Այդ պատմվածքների մեջ կամ կյանքի այս կամ այն տիպական կողմը և կա տիպական մարդ իր ներաշխարհը, իր հոգերանությամբ և իր հույզերով: Տաղանդավոր զրայի հմուտ վարպետությամբ ծագկարտ է արել այդ կյանքի նորափիթիք բացից բարականությունը և փնչելով հավաքածքը, սահեղեկ է իր բարումնավետ ծաղկեփունչը: Դեմքի հայանի այս շրջանի զրայի կամ ստեղծագործությունը իր բազմապիտիք նյութով ու բովանդակությունը կարելի է բնութափներու որպես նկարագրի և հոգերանության ճշմարտացի ու ամբողջական բացահայտում: Նա կարողանում է արվեստագետի նրբությամբ տալ կյանքի փոքր ու մեծ վայրիկի բրումների պատկերը, նկարագրիների և բնավորությանց բազմազան գծերի ճշգրիտ վերաբարդությունը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներն են: Տաղնապը ճակատագրական է, ժամանակը՝ մասմա Մարդիկ աեկոծ ապրումների և խորհրդածությունների մեջ են, պայքարում նոր պրկված մկաններով: Հայ ժողովուրդն էլ տվեց իր կարելին վերջնական հաղթանակի համար: Զինվորագրից Հայ աշխատավորը, ուսուցիչը, բժիշկը, ինժեները, զինվորագրը վեց նաև Հայ զրոյը, այդ թվում և Դերենիկ Դեմքի հայանը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նոր ու տարբեր երանգ է ստանում Դեմքի հայանի ստեղծագործությունը: Նա Հայրենասեր բաղաքացու ազնիվ զիտակցությամբ վերցրեց զրիւ և իր սրտի արյունով զրեց Հայրենաշունչ ստեղծագործությունները, որոնց մեջ զովերդվում էին ժողովրդական Հայրենասիրությունը, ժողովրդի հավաքական ուժը, թշնամուն ատել զիտենալու անհրաժեշտությունը և հաղթանակի նկատմամբ պայծառ հավատը («Խոշտանդվածի ավանդը», «Անխուսափելինը», «Ակերապարձ», «Ծնողները»):

Դերենիկ Դեմքի հայանի պատմվածքների արվեստը ինքնուրույն է և բարձր, կառուցվածքը կուռ, վարպետորեն կերտված: Ճեղինակը կարողացել է իր հերոսների անհատականությունը ակնբախ դարձնել, կարողացել է հոգիների մեջ սողոսկել և գտնել տիպականը:

Դեմքի հայանը բազմաժանք գրող է: Նա գողարիկ բանաստեղծությունների, հերոսապատում պոեմի, հոգերանական և խոհական պատմվածքների հեղինակ չէ միայն:

Նրա բնելմանավոր զգին երկունքն են նաև միշտ շարք թատրոերգություններ, որոնց նյութը հայ ժողովրդի պատմական անցյալն է, ժողովրդական ստեղծագործության ակռանքներից քաղված դրվագներ և ժամանակակից կյանքը («Ֆոստրային շողը», «Կապուտանը», «Նազար», «Երկիր Հայրենիք»). Պետք է ընդգծեն առանձնապես վերջին երկուսի արժեքը: Թաշ Նազարը՝ հայ ժողովրդի իմաստովն և սպանիչ բրիջն է բոլոր այն բախտախնդիրների հասցեին, որոնք պատմականությունների բերումով ժողովուրդ զեկավարելու բախտ են ունենալով, ժողովրդի տառապանքների և թափվող արյան հանդիպ ցուցարկելով անգպամություն և բութ հոգի: Թաշ Նազարը՝ միաժամանակ ժողովրդի խորունկ իմաստության և հաղթող ուժի հաստատումն է: Այստեղ հեղինակը իր յուրահատուկ ծաղը զուգորդել է ժողովրդականի հետ, ստեղծելով զեղարինստալիքն ինապես հաջողված այս ստեղծագործությունը:

«Երկիր Հայրենիք պատմական դրամայի մէջ պատկերված է հայ ժողովրդի անձնութաց պայտարը նենգամիտ Հույների դիմութիր վերցվել է Բագրատունյաց թագավոր Գագիկ Բ-ի կյանքից (11-րդ դար)։ Այս դրամայի մէջ գեղարվեստական ճշմարտացիությամբ վերաբարազրվում է մեր պատմական անցյալը իր բնորոշ կողմերով, մարդկանց ցով։ Հույնի է մանավանդ պարզ մարդկանց, շինարար վարպետների, հասարակ ժողովրդի Հայրենասիրությունը, անձնուրաց պայտարը։ «Երկիր Հայրենիք դրաման մինչ այսօր մնում է հայ բնիքի վրա, Հայրենասիրական լիդը հաղորդելով հանդիսաւունեւն»։

Դերենիկ Դևալիքյանի ստեղծագործությունների փառապահակը սակաբն Ավարդանականը պատմական վեպն է, որտեղ վիզավանի տաղանդը հանդիս է զավակ իր բոլոր երանդներուն: Պատմավիշակ սառափառական:

բովանդակությունը հայրենասիրությունն է և
անձնուրաց պայքարը հանուն հայ Հոգի, հայ
Հոգու պատության: 451 թվականին ամեն
կողմից և ամեն կերպ շվեյցավ հայ ժո-
ղովուրդը կռվի ելավ պարսիկ բռնակալու-
թյան դեմ և վճռեց իր արյունով շահել իր
ազատությունը, սրբագրութել Հայրենի Հոգը,
անաղարտ պահել մայրենի լեզուն և պա-
պենական հավատը: Ազգային արժանա-
պատվության ինքնագիտակցությունը մար-
տիրոսության մեջ մեր ժողովուրդը, որը
չախընտրեց գիտակցված մահը ստրուկի
կանքից:

Բարձր է «Վարդանանք» վեպի արվեստը՝ Արտակարգ զբական վարպետությամբ է զգացված նա: Կերպարների տիպականացումը պատկած է հաջողությամբ, յուրաքանչյուր մարդ ունի իր անհատականությունը: Հակադիր բնավորությունների բնորոշ գծերը պահպի են առաջին իսկ ապավորություննից: Բացասական արաժմազրությունների և փարզունեցության տեր մարդիկ ունեն նույնչափ զրավոր նկարագիր, ինչքան այդ առկա է զբական կերպարների, ժողովրդական հերոսների մոտ: Հակադիր արաժմազրությունների և մարդկանց միջին տեղի տենեցած բախումները ուժգին են, բայց խորպակն համոզիչ: Պատմավեպի լեզուն հարուստ է, ինքնաշխատ և կենացնի: Ոճը զունեղ է, ձկուն և փառթամբ:

Հաղպատիկ ամփոսու, որ անավարտ մնաց մեծանուն զրողի «Մհերոսպ Մաշտոց» պատմամիան:

Այս է զրականության մեծ մշակ և խոսքի մեծ վարպետ Գերենիկ Գեմիրճյանի հոյակապ ստեղծագործությունների համառու ուրիշագիծը:

Դերբնիկ Դեմիքը յանի գրական ողջ ստեղծագործությունն իր արժանի տեղն է գրավում Հայ դպրության ոսկյա գանձարանում:

ФИЗИЧЕСКАЯ

